# ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

## ԵՐԵՎԱՆԻ 2750-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի հիմնադրման 2750-ամյակի կապակցությամբ գիտական մի շարք հաստատություններում տեղի ունեցան հանդիսավոր գիտական ժողովներ։

Հոկտեմբերի 16-ին կայացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը ներածական խոսքով բացեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Երևանն իր հիմնադրման օրից մինչև այժմ տեսել է հարյուրավոր սերունդներ,— ասաց նա,— բայց վերջին սերունդներին վիճակվեց մեծ գործերի կենսագործում։ Մոտ հինգ տասնամյակների ընթացքում սոցիալիստական հանրապետության աշխատավորները կերտեցին իրենց հոյակապ Երևանը, որն այսօր համարվում է լավագույն ու գեղեցիկ մայրաքաղաքներից մեկը։ Ներկայիս Երևանը գերազանցում է այն երազանքները, որ երբևէ ունեցել են նրա բնակիչներն ու կառուցողները։ Այդ մեծ նվաճումների համար Հայաստանի աշխատավորներն իրենց շնորհակալական խոսքն են ուղղում կոմունիստական կուսակցությանը, Սովետական մեծ Միությանը, որի բազմազգ ընտանիքում ստացել են ապրելու և ստեղծագործելու լայն հնարավորություններ։

«Ուրարտական ամրոցներ Երևանի տերիտորիայի վրա» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին։ 1862 թ. Կովկասի հարավում հայտնի դարձան ուրարտական սեպագրերը, սակայն այդ ժողովրդի մշակույթը մնում էր անհայտ։ Այդ առթիվ մի շարք պեղումներ կատարվեցին Ուրարտական պետության կենտրոնում՝ Վանա լճի ավազանում։ Սովետական կարգերի հաստատումից հետո գիտնականները հնարավորություն ստացան սիստեմատիկ աշխատանքներ կատարելու։ Կարմիր բլուրում գտնվեց մի քարի բեկոր սեպագրերով, որտեղ հիշատակվում էր ուրարտական թագավոր Ռուսայի անունը։ Այստեղ պեղումները բսկրսվեցին 1939 թ. և շարունակվում են մինչև օրս։ Պարզվեց, որ բլրի վրա գտնվել է միջնաբերդ, իսկ շուրջը քաղաք՝ Թեյշեբաինին։ Պեղումների շնորհիվ բացվեց 150 սենյակներից բաղկացած մի մեծ շենք, այդ թվում արհեստանոցներ ու մառաններ։ Հայտնաբերված են ցորենի, գարու հատիկներ, գինու կարասներ։ Միջնաբերդում գտնվել են կավից ամաններ, մետաղյա և բրոնզե զենքեր, գարդեր, կենցաղային առարկաներ։ Սեպագրերը հաղորդում են, որ Թեյշեբաինիում կառուցված են եղել բազմաթիվ տաճարներ. 1950 թ. վերսկսվեցին հնագիտական աշխատանքները Արին-բերդում, որտեղ գտնվեց մի նոր սեպագիր արձանագրություն այն մասին, որ Մենուայի որդի Արգիշտի թագավորը մ. թ. ա. 782 թ. կառուցել է բերդ և անվանել Էրեբունի։ Պեղումների ընթացքում բացվեցին մեծ սյունաշար տաճար, պալատական շենք, տնտեսական շատ կառույցներ։ Որոշ ժամանակ Էրեբունին եղել է վարչական կենտրոն և թագավորական նստավայր։ Հետագայում նա կորցրել է իր նշանակությունը, բայց կյանքն այնտեղ երբեք չի դադարել։

«Էրեբունի-Երևանը միջազգային առևտրի մայրուղիների վրա» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը։ Էրեբունի-Երևանը,— ասաց նա,— միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում զգալի դեր է կատարել։ Ստրաբոնի վկայության համաձայն միջազգային առևտրական փոխանակության համար Բոսպորի թագավորության, Բաբելոնի ու Հնդկաստանի միջև միջնորդներ եղել են հայերն ու մեդացիները։ Այս հանգամանքն առնչություն ունի նաև Էրեբունի-Երևանի սկզբնական պատմության հետ։ Մեզ հասած տեղեկությունները որքան էլ սուղ են, այնուամենայնիվ, անուղղակի փաստերի հիման վրա բերում են այն եզրակացության, որ միջազգային առևտրի մայրուղին անցել է Արաքսի հովտով և ճյուղավորվել Արարատյան դաշտում, հատկապես Էրեբունիի շրջակայքում, ապա հասել Մեծամոր ու Ջավախք։ Հենց դրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Էրեբունին իր գոյության բսկզբնական շրջանում առաջատար դեր է կատարել Արարատյան դաշտավայրում։ Ուրարտացիներին հայտնի էր այն ճանապարհը, որը Էրեբունիից Հրազդանի ընթացքով գնում էր դեպի Սևանա լիճ և Աղստև գետի հովիտը։ Եղել է նաև մի այլ հանգուցակետ, որտեղից ճանապարհը ճյուղավորվել է դեպի արևմուտք՝ Վրաց

աշխարհ, այնտեղից էլ Կողքիսի նավահանդիստը, ապա դեպի արևելք, Աղվանք և Մերձկասպյան Մաղքթաց թագավորությունը։ Հելլենիստական շրջանում Երևանի դիրքը դարձել է ավելի հաստատուն, զարգացել է ապրանքափոխանակությունը, Սինոպից դեպի Միջերկրական ծով գնացող քարավանային ճանապարհները անցել են Արարատյան դաշտավայրով՝ Էրեբունիի ու Արտաշատի վրայով։

«Երևանը Սովետական Հայաստանի մայրաքաղաք» զեկուցումով հանդես եկավ պատմ. դիտ. դոկտոր Ա. Սիմոնյանը։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումով սկսվեց պատմական նոր դարաշրջան,— ասաց նա,— վերացվեցին Երևանի զարգացումը կաշկանդող կապանքները, առաջ եկան նոր գործոններ, որոնք աննախադեպ էին նրա 2750-ամյա պատմության մեջ։ Վերջին տասնամյակների ընթացքում քաղաքը զարգացավ, ստացավ ճարտարապետական նոր տեսք, դարձավ ժամանակակից էներգետիկայի, քիմիայի, մեքենաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, թեթև և սննդի արդյունաբերության խոշոր կենտրոն։

* * *

Հոկտեմբերի 15-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, ուր բացման խոսք ասաց համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Երևանի պատմությունը, — ասաց նա, — սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության, նրա տնտեսական, կուլտուրական զարգացման ընթացքի հետ։ Երևանը մեծ դեր է խաղացել ազգային-ազատագրական շարժման մեջ, մասնավորապես Հայաստանի Ռուսաստանի հետ միավորվելու համար մղված պայքարում։ Երևանը ականատես է եղել հայ ժողովրդի պատմական ճակատագրին, մի դաժան ճակատագիր, որից սակայն չի մարել Երևանի բոցն ու ծուխը։

«Հնագույն Երևանը» զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Թ. Հակոբյանը։ Նա հանգամանորեն խոսեց հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների, մասնավորապես Վաղարշապատ, Արմավիր, Տիգրանակերտ, Դվին, Անի մայրաքաղաքների մասին, որոնք պատմական այս կամ այն շրջանում մեծ դեր են կատարել մեր ժողովրդի կյանքում։ Սակայն միայն Երևանն է, որ հարատևել է մեր պատմության ողջ ընթացքում՝ լինելով ժողովրդի հավաքման և մշակույթի կարևորագույն կենտրոն։ Երևանը հնությունների այնպիսի հանգույց է, ուր կարելի է գտնել քարե, պղնձե, բրոնզե, ուրարտական, հնագույն հայկական, անտիկ և հետագա ժամանակաշրջանների նյութական կուլտուրայի մնացորդներ։ Էրեբունին կառուցվել է տասնյակ տարիների ընթացքում։ Նա եղել է Բիայնայի ամենահզոր բերդը Արարատյան դաշտավայրում։ Ուրարտուի անկումից մինչև մ. թ. VII դարն ընկած ժամանակահատվածի Երևանի պատմության ամենահուսալի աղբյուրը քաղաքում ու նրա շրջակայքում հայտնաբերված հնագիտական ու դրամագիտական նյութերն են, որ վկայում են, թե Երևանն այդ դարերում ևս նշանավոր բնակավայր էր։

«Երևանը հայ մատենագրության մեջ» թեմայով զեկուցեց պրոֆ. Ա. Աբրահամյանը։ Նա ասաց, որ քաղաքի մասին տարբեր վկայություններ են պահպանվել պատմիչների, ճանապարհորդների մոտ, Մատենադարանի ձեռագրերի հիշատակարաններում, անձնական նամակներում Սեբեոսը, Ուխտանեսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Զաքարիա Քանաքեռցին, Նաղաշ Հովնաթանը, վիմագիր արձանագրությունները պատմում և հիշատակում են քաղաքի մասին, թշնամու արշավանքների, սովի ու տարերային աղետների մասին։

«Սոցիալիստական Երևանը» զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Վ. Պարսամյանը։ Թվերի լեզվով նա ցույց տվեց Երևանի տնտեսության ու կուլտուրայի աճը։

* * *

Հոկտեմբերի 17-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում տեղի ունեցավ գիտական նստաշրջանի բացման խոսքով հանդես եկավ Մատենադարանի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը։ Նա նշեց Երևան քաղաքի պատմական դերը հայ ազգի մշակույթի զարգացման մեջ։

«Միջնադարյան Երևանի բանաստեղծները» թեմայով զեկուցում կարդաց պատմ. դիտ. դոկտոր Ա. Մնացականյանը։ Էրեբունիի հիմնադրումից հետո, — ասաց նա, — քերթության շատ մշակներ է ծնել Երևանը, որոնցից քչերի անուններն են մեզ հայտնի։ Մատենադարանի ձեռագրերում պահպանվել են մի շարք գրողների անուններ, որոնց թվում է գրիչ Երևանցին (ծն. 1330 թ.)։ XVII—XVIII դարերում Երևանը հայ դպրությանը տվել է այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Զաքարիա Քանաքեռցին, Աբրահամ Երևանցին, Սիմեոն կաթողիկոս Երևանցին, Մարդար Խոջենց Երևանցին, վերջապես՝ Մեսրոպ Թաղիադյանն ու Խաչատուր Արովյանը։

Պատմական գիտ. թեկնածու Մ. Դարբինյանը հանդես եկավ «Զաքարիա Քանաքեռցին և նրա «Պատմությունը» զեկուցումով։ Զաքարիայի գրքի հիմնական մասը XVII դ. պատմությունն է, որ

ընդգրկում է կարևոր ու հետաքրքիր նյութեր այդ շրջանի վերաբերյալ, մասնավորապես Շահ Աբբասի ավերիչ արշավանքների մասին։ Պատմիչը նաև նկարագրում է 1679 թ. երկրաշարժի հետևանքները, որոնք հնարավորություն են տալիս վերականգնել հին Երևանի պատկերը։

«Ազատագրական շարժումները Երևանում XVIII դարի վերջին» թեմայով զեկուցում կարդաց պատմ. գիտ. թեկնածու Վ. Գրիգորյանը։ Հայաստանի ազատագրման ծրագրում,— ասաց նա,— Երևանի ազատագրումը առաջնահերթ խնդիրներից մեկն էր։ Ապրելով պարսից լծի տակ, քաղաքի բնակիչները աշխատել են ամեն կերպ նպաստել այդ գործին։ 1804, 1808, 1827 թթ. ռուսական զորքերի դեպի Երևան կատարած արշավանքների ժամանակ երևանցիների ջանքերը դրսևորվեցին ավելի մարտական ձևով։

«Նրբագծեր հին Երևանի երաժշտական դիմանկարից» վերնագրով զեկուցում կարդաց արվեստ. թեկնածու Ն. Թահմիզյանը։ Նա նշեց, որ հին Երևանում մեծ զարգացում էին ստացել հոգևոր պրոֆեսիոնալ երաժշտությունը և գուսանական արվեստը։

Այնուհետև «Երևանի գրչության կենտրոնները» զեկուցումով հանդես եկավ Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Մաթևոսյանը։ Երևանը և նրան շրջապատող գյուղերը (Նորք, Քանաքեռ, Նորագավիթ, Նորագյուղ) հանդիսացել են միջնադարյան գրչության կենտրոններ։ Քաղաքից և շրջակա գյուղերից մեզ հասել են ավելի քան 50 ձեռագրեր։

* * *

Հոկտեմբերի 11-ին ՀՍՍՀ ԳԱ պատմության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտները անցկացրին համատեղ գիտական սեսիա։ Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը։ Երևանի հիմնադրման մասին, — ասաց նա, — մենք ունենք 11 արձանագրություն, բայց դեռ նախնադարյան ժամանակներում քաղաքի տերիտորիան հայտնի է որպես բնակատեղի։ Այդ են վկայում տարբեր դարաշրջաններից հայտնաբերված բազմաթիվ հնագիտական նյութեր։

«Երևանի հիմնադրումը» զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. թեկնածու Մ. Իսրայելյանը։ Նա կանգ առավ քաղաքի հիմնադրմանը վերաբերող մի շարք փաստերի վրա։ Վանա ժայռի արձանագրությունից հայտնի էր, որ Ուրարտական պետությունում կար Էրեբունի քաղաք, սակայն նրա տեղն անհայտ էր։ 1950 թ. Արին-բերդում գտնված մի շարք սեպագրեր ցույց տրվեցին քաղաքի տեղը։ Զեկուցողի կարծիքով հրնում այդ վայրում ապրել են ոչ թե ուրարտացիներ, այլ տեղացի ուրիշ ցեղեր։

«Արարատյան դաշտը որպես հին Հայաստանի մայրաքաղաքների օրրան» զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. դոկտոր Դ. Սարգսյանը։ Նա նշեց, որ դեռ Ուրարտուի ժամանակ Էրեբունի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի քաղաքները կառուցվել էին Արարատյան դաշտավայրում։ Դա նշանակում է, որ այդ շրջանը եղել է Վանի թագավորության երկրորդ կենտրոն։ Ուրարտական թագավորության անկումից հետո քաղաքների ֆունկցիաները պահպանվեցին։ Արմավիրը (նախկին Արգիշտիխինիլին) ծաղկել է մ. թ. ա. IV դ.։ Երվանդ թագավորը կառուցել է Երվանդաշատ քաղաքը մ. թ. ա. II դ.։ Ավելի ուշ մայրաքաղաք է դարձել Արտաշատը, որը իբրև քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն մնացել է մինչև մեր թվագրության IV դարը։

Երևանի միջնադարյան հուշարձանների մասին զեկուցում կարդաց պատմ. գիտ. դոկտոր Կ. Ղաֆադարյանը։ Վերլուծելով Երևանի տերիտորիայում գտնված շուրջ 300 արձանագրությունների բովանդակությունը, զեկուցողը հանգում է այն եզրակացության, որ միջնադարյան Երևանը այգիներով շրջապատված մի գյուղաքաղաք է եղել, ուր հայտնի են Պողոս-Պետրոս, Կաթողիկե, Զորավոր եկեղեցիները, առևտրական տներ, քարվան-սարայներ և բերդը։ XIII դ. քաղաքում կառուցվել են «Քարե կամուրջ», «Կարմիր կամուրջ», նոր եկեղեցիներ, մզկիթներ, մինարեթներ։

Պատմ. դիտ. թեկնածու Վ. Դիլոյանը զեկուցում կարդաց «Երևանը XVIII դ. և XIX դ. առաջին կեսին» նյութի մասին։ Նա նշեց մասնավորապես քաղաքի դերը ազգային-ազատագրական շարժման մեջ։

«Սոցիալիստական Երևանը» զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. թեկնածու Կ. Կոզմոյանը, որը ընդգծեց Երևանի նշանակությունը Սովետական Հայաստանի արդյունաբերության, կուլտուրայի, քաղաքաշինության զարգացման բնագավառում։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ